



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2012թ.

N 108-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՂՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՆՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Ուխտաձորի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման 2012 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումների պատասխանատու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի վարչակազմը.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱՊԵՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա.

Uxtacori zargacum.1

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«14» մարտի 2012թ.
N108-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՄՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- I. ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՂՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՆՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ
- II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
- IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
- V. ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Ուխտաձորի ենթաշրջանի (այսուհետ՝ Ուխտաձորի ենթաշրջան) համայնքների համաչափ զարգացումը մեծապես պայմանավորված է այդ համայնքների գյուղատնտեսության զարգացմամբ, քանի որ ներկայումս և տեսանելի հեռանկարում այս ենթաշրջանի բնակչության մեծ մասի կենսամակարդակի բարձրացման աղբյուր են լինելու այն եկամուտները, որոնք ստացվում են գյուղատնտեսական արտադրությունից և գյուղատնտեսության բնագավառում վարձու աշխատանքից՝ հաշվի առնելով ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, տեխնիկական ռեսուրսների առկայությունը:

Ուխտաձորի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման համար նախատեսվում է մշակել և իրագործել ամենամյա ծրագրեր: Ծրագրով ներկայացվում են Ուխտաձորի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացմանն ուղղված 2012 թվականին իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

Ծրագիրը նպատակաուղղված է Ուխտաձորի ենթաշրջանի համայնքներում հիմնական միջոցների ստեղծմանը և հետագա զարգացման համար նախադրյալների ապահովմանը:

I. ՈՒՄՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ուխտաձորի ենթաշրջանը գտնվում է Հաղրութի շրջանի հյուսիս-արևելյան մասում: Այն ընդգրկում է Ուխտաձոր, Ակնաղբյուր, Ծակուռի, Հարթաշեն, Մարիամաձոր, Պլեթանց, Ջրակուս և Քյուրաթաղ համայնքները, որոնց հեռավորությունը մայրաքաղաք Ստեփանակերտից տատանվում է 60-103 կիլոմետրի սահմաններում, իսկ շրջկենտրոն Հաղրութից՝ 13-36 կիլոմետրի սահմաններում (Աղյուսակ 1):

Ուխտաձորի ենթաշրջանի համայնքները գտնվում են ծովի մակերևույթից 700-850 մետր բարձրության վրա, որտեղ հողերը հիմնականում շագանակագույն են և քիչ մասը միայն՝ սևահողեր:

Օդի միջին ջերմաստիճանը ամառային ամիսներին լինում է 24-26⁰C, ձմեռային ամիսներին՝ 4-5⁰C, տարեկան միջին տեղումների քանակը՝ 750-800 մմ:

Ենթաշրջանում կա 493 տնտեսություն, բնակչության ընդհանուր թվաքանակը կազմում է 1722 մարդ, ընդ որում՝ բնակչության 86.7 տոկոսը կենտրոնացած է հինգ համայնքներում (Ուխտաձոր, Ակնաղբյուր, Մարիամաձոր, Զրակուս, Քյուրաթաղ) :

Ուխտաձորի ենթաշրջանի համայնքների բնակչության հասակային կազմն ունի հետևյալ պատկերը. մինչև 7 տարեկան նախադպրոցականների թիվը կազմում է 173, մինչև 20 տարեկան ուսանողների, զինծառայողների, դպրոցականների թիվը՝ 460, մինչև 40 տարեկաններինը՝ 811, թոշակառուներինը՝ 318 մարդ (Աղյուսակ 2):

Հադրութի շրջանի Ուխտաձորի ենթաշրջանի համայնքներն ունեն 4935.73 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, որը կազմում է Հադրութի շրջանի ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերի 17.9 տոկոսը, և 197.75 հա տնամերձ հողամասեր: Գյուղատնտեսական հողատեսքերի մեջ վարելահողերի տեսակարար կշիռը կազմում է 32.3 տոկոս, բազմամյա տնկարկներինը՝ 1.1 տոկոս, արոտավայրերը և խոտհարքները կազմում են համապատասխանաբար 57.9 և 2.6 տոկոս (Աղյուսակ 3):

Վարելահողերի ընդհանուր 1595.88 հա տարածքից սեփականաշնորհված է 892.51 հա կամ 55.9 տոկոս, վարձակալված է 165.5 հա կամ 10.4 տոկոսը: Վարելահողերի ավելի քան 33.7 տոկոսը կամ 537.85 հա-ն ազատ է: Արոտավայրերից և խոտհարքներից սեփականաշնորհված կամ վարձակալված հողատարածքներ չկան:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում է 890, մանր եղջերավոր անասուններինը՝ 1132, խոզերինը՝ 175 գլուխ: Համայնքների տնտեսությունները զբաղվում են նաև թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ: Ենթաշրջանում առկա է 7376 թև թռչուն (մեկ տնտեսության հաշվով թռչունների թիվը կազմում է 15) և 200 մեղվաընտանիք (Աղյուսակ 4):

190 գլուխ բանող անասուններից 66 գլուխը ձիեր են, իսկ 124-ը՝ ավանակներ:

Ենթաշրջանի տնտեսությունների հողատարածքների և տնօրինվող անասնագլխաքանակի մասին պատկերացում են տալիս աղյուսակ 6-ում ներկայացված տվյալները. առկա 493 տնտեսությունների 13.2 տոկոսն ունի 0.5-1.0 հա, 17.6 տոկոսը՝ 1-2 հա, 24.1 տոկոսը՝ 2-3 հա, 16 տոկոսը՝ 3-5 հա, 1 տոկոսը՝ 5-10 հա սեփականաշնորհված հողատարածք:

Մինչև 3 գլուխ խոշոր եղջերավոր անասուն տնօրինող տնտեսությունների թիվը կազմում է 30.4 տոկոս, 3-5 գլուխ ունեցողներինը՝ 12.0 տոկոս, 5-10 գլուխ տնօրինողներինը՝ 5.9 տոկոս, 10-15 գլուխ ունեցողներինը՝ 1.0 տոկոս: Խիստ ցածր է նաև 15 գլխից ավելի խոշոր եղջերավոր անասուն ունեցող տնտեսությունների թիվը՝ 7, ինչը կազմում է տնտեսությունների ընդհանուր թվի 1.4 տոկոսը:

Ուխտաձորի ենթաշրջանում մինչև 3 գլուխ խոզ տնօրինող տնտեսությունների թիվը կազմում է 27 կամ՝ տնտեսությունների ընդհանուր թվի 5.5 տոկոսը, 3-5 գլուխ խոզ ունեցող տնտեսությունների թիվը՝ 10 կամ 2 տոկոս, 5-10 գլուխ խոզ ունեցող տնտեսությունների

թիվը՝ 8 կամ 1.6 տոկոս, 10-15 գլուխ խոզ ունեցող տնտեսությունների թիվը՝ 3 կամ 0.6 տոկոս:

Տնտեսությունների շուրջ 6.7 տոկոսն ունի մինչև 3 գլուխ մանր եղջերավոր անասուն, 3-5 գլուխ ունեցողները կազմում են 5.9 տոկոս, 5-10 գլուխ ունեցողները՝ 9.5 տոկոս, իսկ 10-15 և 15-ից ավելի գլուխ տնօրինող տնտեսությունների տեսակարար կշիռը, համապատասխանաբար, կազմում է 3.7 և 2.2 տոկոս:

Ուխտաձորի ենթաշրջանի արոտների ծանրաբեռնվածությունը կազմում է 0.45 գլուխ/հա: Արոտների և խոտհարքների տարածքների հետ անասնազխաքանակի համադրումը վկայում է, որ այդ տարածքներն օգտագործվում են թերբեռնված և առկա է բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման խնդիր: Արդյունավետ օգտագործման պարագայում հնարավոր է անասնազխաքանակը զգալիորեն ավելացնել (Աղյուսակ 5):

Ենթաշրջանի համայնքներում առկա գյուղատնտեսական տեխնիկայի քանակի մասին են վկայում աղյուսակ 7-ում բերված տվյալները. 9 հացահատիկահավաք կոմբայն, 11 շարքացան, 4 ծղոտամամլիչ, 1 խոտհնձիչ, 24 գութան, 11 անիվավոր և 23 թրթուրավոր տրակտորներ:

Ուխտաձորի ենթաշրջանի համայնքներում առկա են 30 բեռնատար և 95 մարդատար ավտոմեքենաներ:

Ուխտաձորի ենթաշրջանի համայնքների բնակչության թվաքանակում ընդհանուր զբաղվածները կազմում են 984 մարդ կամ բնակչության 57.1 տոկոսը, ընդ որում՝ 295 մարդ աշխատում են բյուջետային և տարբեր հիմնարկներում, 53 մարդ զբաղվում են կողմնակի աշխատանքով, 718 մարդ զբաղվում են տնտեսական աշխատանքով (Աղյուսակ 8):

II . ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակը.

Ուխտաձորի ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, տեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման արդյունքում ստեղծել բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար անհրաժեշտ նախադրյալներ:

Խնդիրները.

1) Ուխտաձորի ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության ծավալման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

2) Առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և հողերի վիճակի բարելավման համար հնարավորությունների ստեղծում, վարելահողերի ու բազմամյա տնկարկների՝ ոռոգման ջրով ապահովվածության մակարդակի բարձրացում:

3) Ուխտաձորի ենթաշրջանի համայնքների բնակչության աշխատունակ հատվածի համար լիարժեք զբաղվածության ապահովում:

4) Գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող տնտեսությունների համատեղ գործունեության մեխանիզմների կիրառում:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ուխտաձորի ենթաշրջանի համայնքներում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման համար 2012 թվականին անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող միջոցառումները.

1) Ոռոգման համակարգի բարելավում: Առկա գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային և լիարժեք օգտագործման, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման և բարձր բերքատվության ապահովման կարևոր նախապայմաններից է ոռոգման ոլորտի բարելավումը: Ծրագրով նախատեսվում է 2012 թվականին 50.0 (հիսուն) մլն դրամ ուղղել սուբարտեզյան ջրհորների գործարկման, ջրամբարների կառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացմանը, որը կապահովի ոռոգվող հողատարածքների առկայությունը:

2) Պտղա-հատապտղատու այգիների հիմնադրում: Այս ուղղությամբ նախատեսվում է 2012 թվականին կատարել 5.0 (հինգ) մլն դրամի չափով ներդրումներ, որոնց շնորհիվ պտղատու (հատկապես թզուկ պտղատու ծառատեսակների մշակությունը) և հատապտղատու այգիների հիմնադրմամբ հնարավոր կլինի մի քանի տարի հետո որոշակիորեն ապահովել բնակչության ֆիզիոլոգիական պահանջը թարմ պտուղ-հատապտղի նկատմամբ, ինչպես նաև նախադրյալներ կստեղծվեն վերամշակման համար:

3) 1000 թև հզորությամբ թռչնաֆերմայի վերանորոգում և գործարկում: Նախատեսվում է 2012 թվականին 5.0 (հինգ) մլն դրամ ուղղել հազար թև երկու ամսական ճտերի ձեռքբերման և թռչնաֆերմայի վերանորոգման համար: Կատարվելիք ներդրումները հնարավորություն կտան արտադրել տեղական, էկոլոգիապես մաքուր ձու և թռչնամիս, հետևաբար որոշակիորեն կլուծեն այս կարևոր պարենամթերքների նկատմամբ բնակչության պահանջի ապահովման հարցը: Թռչնաֆերմայի գործարկումը կարևորվում է նաև աշխատատեղերի ստեղծման և աշխատունակ բնակչության զբաղվածության բարձրացման տեսանկյունից:

Նախատեսվում է թռչնաֆերմայի գործարկումը իրականացնել բաժնետիրացման միջոցով՝ առաջարկելով ենթաշրջանի բնակիչներին կատարել ներդրումներ ու կայացնել ֆերմայի գործարկումը, ինչպես նաև ենթաշրջանի բնակչությանը ապահովել վարձու աշխատանքով:

4) Խոշոր եղջերավոր և մանր եղջերավոր անասունների ձեռքբերում: Նախատեսվում է 2012 թվականին 90.0 (իննսուն) մլն դրամ ուղղել խոշոր և մանր եղջերավոր անասունների ձեռքբերմանը: Դա հնարավորություն կտա անասնազլխաքանակի ավելացման հետ մեկտեղ ավելացնել անասնապահական մթերքների արտադրությունը, որը կբերի պարենամթերքների ինքնաբավության բարձրացման: Ուղղությունը կարևորվում է նաև վերամշակման հնարավորություն ստեղծելու, հետևաբար աշխատուժի պահանջարկի և

ընդհանուր առմամբ բնակչության եկամուտների ավելացման տեսանկյունից: Անասնազվխաքանակի ավելացումը խթան կհանդիսանա նաև կերակուլտուրաների մշակության համար, իսկ վերջինս պայմաններ կստեղծի մեղվաբուծության զարգացման համար:

Հարկ է նշել, որ Ուխտաձորի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման համար որպես օժանդակություն նախատեսվող 150.0 (հարյուր հիսուն) մլն դրամից 50.0 (հիսուն) մլն դրամը, որը կուղղվի ոռոգման համակարգի բարելավմանը, նախատեսվում է իրականացնել որպես անհատույց ներդրում, իսկ մնացած 100.0 (հարյուր) մլն դրամը կտրամադրվի վարկավորման միջոցով՝ հետագայում վերադարձնելու պայմանով:

Ծրագրի իրագործման համար 2012 թվականին պահանջվող ներդրումներն ըստ եռամսյակների ներկայացված են աղյուսակ 9-ում:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում Ծրագրի իրականացումից ակնկալվում է Ուխտաձորի ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որը կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) կապահովվի ոռոգվող հողատարածքների առկայությունը, որը զգալիորեն կբարձրացնի վարելահողերի օգտագործման մակարդակը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության ծավալները.

2) հիմնադրվելիք պտղա-հատապտղատու այգիները բերքատվության կհասնեն չորրորդ տարում, որի արդյունքում կավելանան պտուղ-հատապտղի արտադրության ծավալները.

3) անասնապահության ինտենսիվ զարգացման արդյունքում կավելանան անասնազվխաքանակն ու անասնաբուծական մթերքների ծավալը.

4) անասնազվխաքանակի ավելացման արդյունքում կբարձրանա բնական կերահանդակների օգտագործման մակարդակը, կավելանան կերակուլտուրաների ցանքատարածությունները.

5) բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալների ավելացումը նախադրյալներ կստեղծի վերամշակման ոլորտի զարգացման համար.

6) կբարձրանա ենթաշրջանի պարենային ապահովության և ինքնաբավության մակարդակը.

7) գյուղատնտեսության ոլորտի գործունեության զարգացման արդյունքում զգալիորեն կբարձրանա զբաղվածության մակարդակը, կավելանան եկամուտները:

ՀԱՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՏԱՁՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԸ

Հ/Հ	Համայնքը	Հեռավորությունը (կմ)		Գոտիականությունը	Բարձրությունը ծովի մակարդակից (մետր)
		Ստեփանակերտից	Շրջկենտրոնից		
1.	Ուխտաձոր	82	20	նախալեռնային	700
2.	Ակնաղբյուր	80	28	նախալեռնային	800
3.	Ծակուռի	60	13	նախալեռնային	850
4.	Հարթաշեն	83	28	նախալեռնային	800
5.	Մարիամաձոր	65	16	նախալեռնային	850
6.	Պլեթանց	103	22	նախալեռնային	730
7.	Զրակուս	60	25	նախալեռնային	820
8.	Քյուրաթաղ	80	36	նախալեռնային	700

ՀԱՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՏԱՁՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԱԳՐԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԸ ԱՌ 23.12.2011 ԹՎԱԿԱՆԸ

Հ/Հ	Համայնքը	Տնտեսությունների քանակը	Բնակչության թվաքանակը (մարդ)	Բնակչության հասակային կազմը (մարդ)			
				Նախադպրոցականներ (մինչև 7 տարեկան)	Ուսանողներ, զինծառայողներ, դպրոցականներ (մինչև 20 տարեկան)	Մինչև 40 տարեկան	Թոշակառուներ
1.	Ուխտաձոր	113	345	22	60	63	113
2.	Ակնաղբյուր	82	330	31	45	114	36
3.	Ծակուռի	34	102	11	14	44	27
4.	Հարթաշեն	34	97	5	23	28	16
5.	Մարիամաձոր	77	268	41	58	168	33
6.	Պլեթանց	14	30	-	2	13	8
7.	Զրակուս	55	234	24	68	174	49
8.	Քյուրաթաղ	84	316	39	190	207	36
ԸՆԴՀԱՆՆԵՐ		493	1722	173	460	811	318

ՀԱՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՄՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԵՎ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌ 2011 ԹՎԱԿԱՆԸ

/հեկտար/

Հ/Հ	Համայնքը	Ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողեր	ո թ ի ց									Սնամերձ հողամասեր
			Վարելահող				Բնական կերահանդակ		Բազմամյա տնկարկներ		Այլ հողատեսքեր	
			Ընդամենը	այդ թվում			Արոտ	Խոտհարք	Ընդամենը	այդ թվում		
				Սեփականաշնորհված	Վարձակալված	Ազատ						
1.	Ուխտաձոր	720.3	400.83	233.63	57.0	110.2	255.3	20.7	-	-	43.47	32.5
2.	Ակնաղբյուր	1306.13	171.21	160.67	4.0	6.54	1038.64	25.9	-	-	70.38	29.62
3.	Ծակուռի	241.68	107.5	59.14	-	48.36	82.5	10.5	14.06	-	27.12	20.65
4.	Հարթաշեն	304.16	141.21	45.13	1.0	95.08	138.38	-	12.3	-	12.27	34.73
5.	Մարիամաձոր	308.1	111.84	91.27	3.5	17.07	165.5	21.5	1.47	-	7.79	20.69
6.	Պլեթանց	598.19	141.08	32.16	20.0	88.9	398.49	20.47	7.67	1.85	30.48	13.58
7.	Զրակուս	927.18	360.0	108.3	80.0	171.7	438.96	17.3	14.14	-	96.78	19.28
8.	Քյուրաթաղ	529.99	162.21	162.21	-	-	338.25	12.8	4.0	-	12.73	26.7
ԸՆԴԱՄԵՆԸ		4935.73	1595.88	892.51	165.5	537.85	2856.02	129.17	53.64	1.85	301.02	197.75

ՀԱՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՏԱՁՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ ԱՌ 23.12.2011 ԹՎԱԿԱՆԸ

/գլուխ/

Հ/Հ	Համայնքը	Խոշոր եղջերավոր անասուն	Մանր եղջերավոր անասուն	Խոզեր	Թռչուններ (թև)	Մեղվա- ընտանիք (հատ)	Ձի	Ավա- նակ
1.	Ուխտաձոր	193	282	45	1046	24	15	37
2.	Ակնաղբյուր	185	151	43	1500	-	16	22
3.	Ծակուռի	60	17	5	600	15	6	4
4.	Հարթաշեն	81	12	5	450	3	1	7
5.	Մարիամաձոր	88	56	40	1080	32	4	13
6.	Պլեթանց	86	6	12	500	-	2	5
7.	Զրակուս	83	217	9	700	26	10	19
8.	Քյուրաթաղ	114	391	16	1500	100	12	19
ԸՆԴԱՄԵՆԸ		890	1132	175	7376	200	66	124

ՀԱՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՏԱՁՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱԿԱՅՐԵՐԻ ԱՌԿԱ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐ ԲՈՒԾԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌ 23.12.2011 ԹՎԱԿԱՆԸ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Արոտ (հա)	Խոշոր եղջերավոր անասուն (գլուխ)	Մանր եղջերավոր անասուն (գլուխ)	Խոզեր (գլուխ)	Ընդամենը պայմանական գլխաքանակ	Բեռնվածությունը (գլուխ/ հա)	Ընդամենը ավելացվելիք պայմանական գլխաքանակ
1.	Ուխտաձոր	255.3	193	282	45	215	0.8	107
2.	Ակնաղբյուր	1038.64	185	151	43	196	0.2	86
3.	Ծակուռի	82.5	60	17	5	58	0.7	77
4.	Հարթաշեն	138.38	81	12	5	71	0.5	20
5.	Մարիամաձոր	165.5	88	56	40	90	0.5	126
6.	Պլեթանց	398.49	86	6	12	79	0.2	50
7.	Զրակուս	438.96	83	217	9	112	0.3	130
8.	Քյուրաթաղ	338.25	114	391	16	155	0.4	50
ԸՆԴԱՄԵՆԸ		2856.02	890	1132	175	976	0.45*	646

*-ցուցանիշը արտահայտում է Ուխտաձորի ենթաշրջանի արոտավայրերի միջին բեռնվածությունը:

ՀԱՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՂ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԱՌ 23.12.2011 ԹՎԱԿԱՆԸ

Հ/Հ	Համայնքը	Տնտեսությունների թիվը	Սեփականաշնորհված հողեր ունեցող տնտեսություններ					Տնտեսությունների թիվն ըստ տնօրինող գլխաքանակի														
			0.5-1 հա	1-2 հա	2-3 հա	3-5 հա	5-10 հա	Խոշոր եղջերավոր անասուններ					Մանր եղջերավոր անասուններ					Խոզեր				
								մինչև 3 գլ.	3-5 գլ.	5-10 գլ.	10-15 գլ.	15-ից ավելի	մինչև 3 գլ.	3-5 գլ.	5-10 գլ.	10-15 գլ.	15-ից ավելի	մինչև 3 գլ.	3-5 գլ.	5-10 գլ.	10-15 գլ.	15-ից ավելի
1.	Ուխտաձոր	113	6	4	33	22	2	61	5	3	2	1	11	15	21	5	4	-	6	2	1	-
2.	Ակնաղբյուր	82	10	14	20	16	-	18	16	6	1	1	4	1	10	2	1	-	3	2	1	-
3.	Ծակուռի	34	6	14	8	2	-	4	4	4	-	1	2	-	2	-	-	-	-	1	-	-
4.	Հարթաշեն	34	3	5	4	5	-	7	3	4	1	1	-	-	2	-	-	2	-	-	-	-
5.	Մարիամաձոր	77	19	17	21	5	-	17	10	3	-	-	2	3	2	-	1	6	-	3	1	-
6.	Պլեթանց	14	2	12	-	-	-	2	2	4	-	2	2	-	-	-	-	3	-	-	-	-
7.	Զրակուս	55	4	4	11	14	3	13	12	2	1	1	2	5	5	5	-	8	-	-	-	-
8.	Քյուրաթաղ	84	15	17	22	15	-	28	7	3	-	-	10	5	5	6	5	8	1	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		493	65	87	119	79	5	150	59	29	5	7	33	29	47	18	11	27	10	8	3	-

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՐՐՈՒԹԻ ԵՐԶԱՆԻ ՈՒՏՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐԶԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՆԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ
ԱՌ 23.12.2011 ԹՎԱԿԱՆԸ

Հ/Հ	Համայնքը	Գյուղտեխնիկա							Ավտոմեքենաներ	
		Հացահատիկա- հավաք կոմբայն	Շարքացան	Ծղոտամանիչ	Խոտհիմնիչ	Գութան	Անիվավոր մատիոր տրակտոր	Թրթուրավոր տրակտոր	Մարդատար	Բեռնատար
1.	Ուխտաձոր	1	2	-	-	4	3	4	14	3
2.	Ակնաղբյուր	3	-	-	-	4	2	4	15	4
3.	Ծակուռի	1	1	-	-	2	2	1	11	10
4.	Հարթաշեն	-	1	-	-	-	-	-	-	-
5.	Մարիամաձոր	1	2	1	1	4	1	4	15	4
6.	Պլեթանց	-	-	-	-	-	-	-	2	-
7.	Զրակուս	3	3	1	-	6	-	6	21	4
8.	Քյուրաթաղ	-	2	2	-	4	3	4	17	5
ԸՆԴԱՍԵՆԸ		9	11	4	1	24	11	23	95	30

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՐՐՈՒԹԻ ԵՐԶԱՆԻ ՈՒՏՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐԶԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԶԲԱԴՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՌ 23.12.2011 ԹՎԱԿԱՆԸ

/մարդ/

Հ/Հ	Համայնքը	Բնակչության թվաքանակը	Ընդհանուր գբաղված- ների թիվը	Բյուջետային և տարբեր հիմնարկներում աշխատողների թիվը	Կողմնակի աշխատանքով գբաղվողների թիվը	Տնտեսական աշխատանքով գբաղվողների թիվը
1.	Ուխտաձոր	345	212	42	10	160
2.	Ակնաղբյուր	330	175	45	10	120
3.	Ծակուռի	102	50	15	10	27
4.	Հարթաշեն	97	50	20	6	4
5.	Մարիամաձոր	268	183	71	12	94
6.	Պլեթանց	30	10	5	5	10
7.	Զրակուս	234	150	34	-	50
8.	Քյուրաթաղ	316	154	63	-	253
ԸՆԴԱՍԵՆԸ		1722	984	295	53	718

**ՀԱՂՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՈՒՆՏԱԶՈՐԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋԿՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ**

/հազ. դրամ/

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2012թ.	այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1.	Ոռոգման համակարգի բարելավում	50000.0	-	50000.0	-	-
2.	Պտղա-հատապտղատու այգիների հիմնադրում	5000.0	-	-	2000.0	3000.0
3.	1000 թև հզորությամբ թռչնաֆերմայի վերանորոգում և գործարկում	5000.0	-	5000.0	-	-
4.	Խոշոր եղջերավոր անասունի և մանր եղջերավոր անասունի ձեռքբերում	90000.0	5000.0	45000.0	20000.0	20000.0
ԸՆԴԱՄԵՆԸ		150000.0	5000.0	100000.0	22000.0	23000.0

**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ԱՎԱԳՅԱՆ